ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(ԽԵՒ) ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

= 7 =

ՏԱՂ ՅՈՎԱՆԻՍԻ ԽԵՎԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԵՐԱՑ ԱՅԻՇԱՅԻՆ

Ա.

Այս ինչ կըրակ էր զիս էրեց,
Այս ինչ խաւար էր զիս պատեց,
Ես վէմ անխախտ էի խախտեց,
Պողպատ ամուր, զէտ ջուր հալեց:

Բ.

Եկաւ անցաւ ու ճոխ քալեց,
Ճօճեաց ու զմէջքըն կոտորեց,
Դարձաւ յետեւ խոլոռ նայեց,
Զանձրս տեսաւ ու զահընդեց:

Գ.

Աւրըն շաբաթ լոյս Կիրակի,
Վերի Վանացն ի վայր կուգի,
Բուրվառ ի ձեռըս խնկէի,
Սաղմոսարան յանթս ունէի:

Դ.

Հետ կու գայի. հետ կարդայի,
Թ՝ երթամ հանիմ ճաշու ժամի,
Եկի առի հանց կըրակի,
Ոչ գրէի, ւ ոչ կարդայի:

Բնագրի կազմութեան համար նկատի առած ենք թէ Կոստանդեանցի հրատարակածը և թէ Ց. Քիւրտեանի երկու տարբերակները։ — Վ = Կոստանդեանց, Նոր ժողովածու, Դ. Պրակ, էջ 11։ Ց = Հայրենիք Ամսագիր, 1935, Ցլս. էջ 87 (Ձեռ. թկ. 1678)։ Ք = Նոյն, էջ 88 (Ձեռ. թկ. 1724)։ Կոստանդեանցի Ձեռագրին թուականն է 1695։ Հմմտ. նաև Ռ = Սուրխաթեան, Գրական Գոհարներ, Ա. էջ 417, առնուած Կոստանդեանցէն։

Վերնագիր. — Տաղ Երզնկացի Յովանէսէ ասացեալ, Վ։ Տաղ Յովանէսին, եւ Ղատու գստեր Անշային ասացեալ, Ք։

Ա, 1. — ... այրեց, ՎՌ։ էր, որ, Ք։ — 2 այս, կամ, Ռ։ եր, որ, ՎՔՌ։ — 3 — խախտեաց, Ք։ — 4 — զերդ, Ք։

Բ, 1. — ճոխք, Ռ։ քայլեց, Ք։ — 2 — ճօճաց, Ռ։ ու, չունի Ց։ կորեց, Ց։ քան զամենայն պայծառ փայլեց, Ք։ — 3 — յետեւ, ի յետ, Վ. ի յետ Ք։ — 4 — յանձն իմ տեսեալ յոյժ զարհուրեց, Ք։

Գ, 2. — ... կու գայի, Ց. ի վայր գայի, Ք։ — 3 — ձեռքըս, Ց։ ու խունկն ի լի, ՎՌ. խնկալի, Ք։ — 4 — յանդս, ՑՔ, անդս, ՎՌ։

Դ, 2. — թէ, չունին, ՎՌ. թէ գնամ, Ք։ — 3 — եւ ես գիպայ յանձ կրակի, Ք։ — 4 — ւ, չունին ՎՔ։

digitised by A.R.A.R.@

Ե.

Մէկ մի հեծեր պօղ պէտաւի,
Եկաւ անցաւ քաջ մուհալի,
Այեր ունէր Թավրէզստանի,
Ընբվին ըզխելքըս կու տանի:

Զ.

Ինձոր ծրգեց, մրտիկ չարի,
Մէկ մ'այլ ծրգեց, ցածցայ առի.
— Սէն մուսուրման մոլլայ ղըզի,
Պէն Ովանէս քէշիշ օղլի,
Ինձորդ ի յիս ի՞նչ բան ունի:

Է.

— Իւրի, իւրի, կեավուր օղլի,
Կեւթուր պիզտէն մուհալ սեւզի,
Պէն մուսուրման մոլլայ ղըզի,
Սէն Ովանէս քէշիշ օղլի,
Զիրար սիրենք, խոշ կու լինի:

Ը.

Յովանիսի մայրն է աղայ,
Հագեր վալայ, ի վրան ջուպայ,
Ջօրն ի վաներրն շուրջ կու գայ,
Ու խունկ ու մոմ կու խոստանայ:

Թ.

Սարկաւագեր, ասէք, մեղայ,
Հաբեղանի, Տէր ողորմեայ,
Աղաչեցէք զԲրիստոս Աստուած,
Թ' իմ Յովանէսն ի տուն դառնայ:

Ժ.

Մէկ մի չասաց թէ, Տէր, մեղայ,
ամէնն Սլլահ ու շէյտուլայ,
Յետոյ զայս նուղապն ասացին,
— Յովանէսին այլ ճար չըկայ:

Ե, 1. — Մեկ մի, Անչան. Բ։ մի, մ'է, Ռ։ — 2 — մուղալի, ՎՌ։ Հանց աննման զարմանալի, Բ։ — 3 — ... Թաւրէզ տաւի, ՎՌ։ ... ունի զերդ ճէյրանի, Բ։ — 4 — ընբվին, ունէր, Ց։ Կամար ունքերն խելքս տանի, Բ։

Զ, 1. — ձգեաց, Բ։ — 3 — Ասացի դուն մոլլայ կըզի, Բ։

Է, 1. — եօրու, եօրու, կեաւուր օղլու, ՎՌ։ Ասաց երի... Բ։ — 2 — կեաթուր ... սօղու, ՎՌ։ Սեոյլէմիշ օլ. — Բ։ — 3 = 4, ՎՌ։ միւսիւրման, ՎՌ։ Դուն Քրիստոնեայ ես մուսլիման, Բ։ — 4 = 3, ՎՌ, չունի Բ։ — 5 — զիրեար սիրեանք ... Բ։

Ը. 1. — ... տղա՛յ, ՎՌ։ մայրն իմանայ, Բ։ — 2 — ... վրան ճուպայ, Վ։ Նորայ խղճուն ով դիմանայ, Բ։ — 3 — վերի վանեբացն ի շուրջ ... ՎՌ։ Վանքերն բոլոր ի ... Բ։ — 4 — խունկ ու մոմեր ... Բ։

Թ, 1. — Հաբեղաններ, ՎՌ։ Աբեղանի աղօթք արարէք, Բ։ — 2 — Սարկաւագներ, ՎՌ։ Սարկաւագունք ... Բ։ — 3 — Մինթէ իւր խելքն ի վերան գայ, ՎՔՌ։ — 4 — Թ', չունի Բ։

Ժ. — Զունի, Ց։ — 1 — ... չասաց Տէր ողորմեայ, Բ։ — 3 — ամենեքեան զայս ... Բ։ — 4 այլ Յովանէսին ... ՎՌ։

digitised by A.R.A.R.@

ԺԱ.

— Ծոյ Յովանէս, ծոյ իմ տըղայ,
Դարձիր ի տուն, ասա, մեղայ.
Այիշան տանիկ է զենեհար,
Ես Հայ բերեմ քեզի համար,
Քան զԱյիշան ւ այլ աղէկ լինայ:

ԺԲ.

— Այ իմ մարիկ, մի՛ տխմարնար,
Զըկայ նըման զեմ Այիշին,
Այիշան թուխ, ունքն է կամար,
Քաղցար եմ թէ զինքն ուրանամ:

ԺԳ.

— Ծոյ Յովանէս, ծոյ իմ տըղայ,
Դարձիր ի տուն, ասա, մեղա՛յ,
Հոնկայ տէրտէրըդ կու ճօրայ,
Թ՚ Աշան ընկեր ի հետ նորայ:

ԺԴ.

— Այ իմ մարիկ, ես քու ծառայ,
Թէ իմ տէրտէրն կու ճօրայ,
Նայ ես զԱշան ցցնեմ նորա,
Քան զիս ու այլ խէվ կու լինայ:

ԺԵ.

— Ծոյ Յովանէս, ծոյ իմ տըղայ,
Դարձիր ի տուն, ասա, մեղայ.
Դու մէկիկ ես, այլ ճար չըկայ,
Ի այլ լինալու ճարակ չըկայ:

ԺԶ.

— Այ իմ մարիկ, ես քի ծառայ,
Կաթն որ կերայ հալալ արայ,
Ըզխելքս առին, ես խէվ եղայ,
Ցիսմէ ի քեզ այլ ճար չըկայ:

ԺԷ.

— Ծոյ Յովանէս, ծոյ իմ տըղայ,
Դարձիր ի տուն, ասա, մեղայ.
Քեզի բերեմ Հայու զատրիկ,
Ըզքեզ աւրհնել տամ քահանայ:

ԺԱ. — Զուլի, Բ։ — 3–5, Զուլիկ, ՎՌ։

ԺԲ. — Զուլիկ, ՎԲՌ։

ԺԳ, 1. — Որդեակ իմ Հովաննէս սիրուն տղայ, Բ։ — 3 — հանը քու տէրտէրն ... Ց։ Քո տէրտէր հայրդ նեղանայ, Բ։ — 4 — Թէ Այիշան ... Ց։ ընկեր է ... ՎՌ։ Թէ իմ որդին հոն ինչ կու երթայ, Բ։

ԺԴ, 1. — ես fo, ես քեզ, ՎՌ։ Հայր իմ մայր ես ձեզ ծառայ, Բ։ — 2 — կու, զիս, ՎՌ։ Իմ հայր տէրտէրն էր նեղանայ, Բ։ — 3 — զԱյիշան ցըցնեմ, Ց։ Անշան ցուցանեմ ... Բ։ — 4 — Նա քան զիս այլ խէվ կու դառնայ, Բ։

ԺԵ, 1. — Որդեակ իմ Յովանէս սիրուն տղայ, Բ։ — 2 — ի տուն, չունի, Բ։ — 3 — ... մ'ես, Ց։ Դուն մէկ հատիկ ես ... Բ։ — 4 — այլ եղնելու ... Բ։

ԺԶ. 1. — ՔԵ, ՎՌ։ Մայր իմ ծնող ես քեզ ծառայ, Բ։ — 2 — զկաթդ, ՎՌ։ կաթդ, Բ։ — 3 — ես, ու, ՎՌ։ — 4 — յինանէ, ՎՌ. ինձանէ, Բ։

ԺԷ. — Հմմտ. ԺԱ։ — 1 — Որդեակ իմ Յովանէս սիրուն տղայ, Բ։ — 3 — ... դուսար խօճայ, Բ։

digitised by A.R.A.R.@

ԺԸ.

— Հայ իմ մարիկ, մի՛ տխմարնար,
Զրկայ նման զէմ Աշային.
Լեզուն պիւլպիւլ, ծայնն զումրի,
Մէջքն բարակ զէտ ֆըռանկի:

ԺԹ.

Աշան նստեր փէնճարային,
Ու խիստ տրտում ափն երեսին,
Թ՝ այսօր ծեծեց իմ հայր զատին,
— Ցէ՞ր կու սիրես զհայու որդին:

Ի.

Խէվ Յովանէսն երբ զայն լըսեց,
Բռնեց զճամբան ի Եզընկին,
Գլխիբաց գըտակն յափին,
Գնաց կանգնեցաւ յառջեւ Խանին:

ԻԱ.

Բարեւ երետ Թագաւորին,
Նոքա շուտով զբարեւն առին,
Բռնեց ըզպօղ ծիուն ագին,
Կաֆայ ասաց ամէն ծարին:

ԻԲ.

Աշան կանգներ ի վրայ բերդին,
Մըտիկ կ՝անէր Յովանէսին,
Քոմվն է կանգներ դեղին հագնողն,
Ինքն ըզկանանչն ու զծիրանին:

ԻԳ.

— Ծոյ Յովանէս մըտիկ արայ,
Ի վրայ բերդին ինչ կու խաղայ,
Դեղինվորին ես եմ ծառայ,
Կանանչվորին զանունն ասայ:

ԻԴ.

Թէ չէ լինիմ շահին բազայ,
Թռչիմ նստիմ Թեւիդ վերայ,
Պապուս անունն ասես մոլլայ,
Աղբաւրս ասեն քաղքի շահնայ:

ԺԸ. — Համմ. ԺԲ։ — 1 — Մայր իմ ծնող ես քեզ ծառայ, Բ։ — 2 — Ցանկարծ պատահեաց վաղեցայ, Բ։ — «Զեռագրիս մէջ էջին մեացեալ մասը պարապ կը մնայ», կը գրէ Ց. Քիւրտեան (Հայր. Ամս. 1935, Ցլս. էջ 89)։

ԺԹ, 1. — ... էր փէնճէրէն, ՎՌ։ — 2 — Ափն երեսին էր, խիստ կու լար, ՎՌ։ — 4 — Ցէ՞ր, թ՝էր. ՎՌ։ — ՎՌ ունին երկու տող ևս. «Տես թէ կ՝ելնէ՞, մէկ մի կու գա՞յ. Ականջն խո՛ւլ Յովաննէսին»։

Ի, 2. — ... ըզճամբին որ տվին, Ց։

ԻԲ. — Զունի, Ց։

ԻԳ, 2. — Ի վերայ, ՎՅՌ։ — 3 — Դեղընվոր ես քեզ ... Ց։

ԻԴ, 1. — ... բոչայ, Ց։ — 2 — Թռնիմ, Վ։ Թեւին, Ց։ Թռնեմ նստեմ, Ռ։ — 3 — ասեմ, ՎՌ։ — 4 — քաղքին, Ց։

digitised by A.R.A.R.@

ԻԵ.

Եւ զիմ անունս ասեն Աշայ,
Մէկալ բուրոջքս Օղուլդայ,
Զիմ մօրն անունն ասեն Ֆաթմայ,
Ու հօրս ասեն դատի մոլլայ:

ԻԶ.

Խեւ Յովանէս ես քի ծառայ,
Դու իմ խոցուս ճար մի արայ,
Թէ չէ հոգիս բակտաւ ւ մեռայ,
Զէտ մոմ ի տեղքս հալեցայ:

ԻԷ.

Ծոյ Յովանէս, մզկիթ մտնուլ պիտիս,
Մատնիկդ ի վեր կալնուլ պիտիս,
Հետ մոլլանուն շուրջ գալ պիտիս,
Հրպայ ծոցուս տէր կու լինիս:

ԻԸ.

— Աշայ, սէրդ ինձ հարամ լինայ,
Թէ այդ բաներդ հանց կու լինայ.
Աշայ, գտնուս յօրդ ի մահուն,
Զինչ ջանացիր հետ իմ հաւտուն:

ԻԹ.

Ութը կանոն սաղմոս ուսայ,
Զան ալ ի քո սիրուդ մոռցայ,
Աւր մի չասի՝ թէ Տէր մեղայ,
Ամէնն Ալլահ ու շէյտուլլայ:

Լ.

— Ծոյ Յովանէս, փոքր ի յօրաց,
Փոքր ի յօրաց, ծանդր ի խելաց,
Այշան փորձեց բան մրն ասաց,
Զը լրսեցիր դու մէկ խօսաց:

ԼԱ.

Գրնայ շինէ եկեղեցի,
Որ գամ մրտնում կօշկովս ի Ներս,
Պրսակ դրնեն, ըզմեզ աւրհնեն,
Թող քու սրտին կամքրն լինի:

(13) Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

ԻԵ, 1. — անունն, Ռ։ — 2 — Ղուզութայ, ՎՌ։ — 3 — իմ մօրս ... ՎՌ։

ԻԶ, 1. — Խեւ Յովանէս է քո ծառայ, ՎՌ։ — 2 — Շուտով տէրտիս տէրման արա, ՎՌ։ — 3 — Թէ չէ խեւցայ լեռներն ընկայ, ՎՌ։ ւ, ես, Ց։ — 4 — Մեղացս տէր դու կու լինիս, Ց։

ԻԷ, 2. — ըզմաթրդ, Ց։ — 3 — Ժուռ գալ, Ց։ — 4 — ապա, ՎՌ։

ԻԸ, 1. — Աղայ, Ց։ — 2 — բանրդ, Ց. — 4 — ... իմ ճամբուն, Ց։

ԻԹ, 2. — Զանալ ի քու ... Ց։ — 4 — գամէնն ալլահու շէյտիլլայ, Ց։

Լ. — Զունի, Ռ։ — 1 — ... փոքրի օրած, Վ։ Փոքր եօրած, Ց։ — 2 — Փոք ... [թերի] Վ։ Փոքր եօրած ծանր խելաց, Ց։ — 3 — Այիչան ... բանմն ... Ց։

ԼԱ. — Զունին, ՎՌ։

digitised by A.R.A.R.@